«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0037, Ազատության պ. 1/21-1
Հեռ.՝ +374 60 701 707, +374 77 010 863
info@ayb.am
www.ayb.am

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

JOLLY PHONICS ԾՐԱԳԻՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՈՒՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մասնակից՝ Ջուլիետա Ադամյան

«Այբ» դպրոց

Մենտոր՝ Լիլիթ Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գրականության Ակնարկ……5

Jolly Phonics ծրագիրը՝ որպես հնչյունաբանության և սահուն ընթերցանության դասավանդման հիմնական գործիք տարրական դպրոցում……6

Եզրակացություն……12

Գրականության ցանկ……14

Հավելված……15

Ներածություն

Անգլերենի՝ որպես օտար լեզվի, դասավանդման կարևոր բաղադրիչներից է հնչյունաբանության և հստակ ու սահուն ընթերցանության ուսուցումը: Դասավանդման առաջին տարիներին, օգտվելով ավանդական մեթոդներից, երեխաների ընթերցանության արդյունքները այդքան էլ գոհացնող չէին, քանի որ ուշ էին սկսում բառեր կազմել և կարդալ: Խնդիրը հետաքրքրեց ինձ և նպաստեց, որպեսզի ուսումնասիրեմ և բացահայտեմ այլընտրանքային տարբերակներ:

Այդ ճանապարհին գտա Jolly Phonics ծրագիրը, որն այժմ աշխարհում ամենահաջողվածներից է: Այն ի սկզբանե ստեղծվել է լեզվակիր փոքրիկների համար, ովքեր կսովորեին այս ծրագրով ուսուցման նախնական փուլում: Սակայն հետո այն ներառվել է նաև անգլերենը՝ որպես օտար լեզվի դասավանդման ծրագրերում, որտեղ նույնպես հաջողել է:

Հարկ է նշել, որ ծրագրի հաջողության գրավականներից մեկն այն է, որ այն ստեղծվել է հենց ուսուցիչների կողմից: Մեթոդը սովորեցնում է երեխաներին գրել և կարդալ՝ օգտագործելով համադրական հնչյունաբանությունը (synthetic phonics): Այն աշխարհում լայնորեն ընդունված մեթոդ է, որի արդյունավետությունը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտությունների ընթացքում: Այն իր մեջ ներառում է ամբողջական փաթեթ, որը դասավանդում է ոչ միայն հնչյունաբանություն, այլ նաև ուղղագրություն, կետադրություն, ընթերցանություն: Ծրագիրն իր մեջ ներառում է կարճ պատմվածքներ, երգեր, որոնց ընթացքում երեխաները պատկերավոր շարժումներով ցուցադրում են գործողություններ, որոնք նաև նման են տառի գրելաձևին:

Թեման **արդիական** է, քանի որ ընթերցանությունը միշտ դժվարություններ է առաջացնում անգլերենը՝ որպես օտար լեզու սովորող երեխաների մոտ: Նրանք դժվարանում են հնչյունները միմյանց կապել և բառեր ստանալ, ինչպես նաև սահուն ընթերցել: Հետևաբար անհրաժեշտ էր գտնել այլընտրանքային տարբերակ, որը կհեշտացներ այդ գործընթացը և այն ավելի արդյունավետ կդարձներ:

Հետազոտության **նպատակն** է՝

Ուսումնասիրել Jolly Phonics ծրագրի արդյունավետությունը առաջին և երկրորդ դասարաններում անգլերենի հնչյունաբանություն և ընթերցանություն դասավանդելիս:

Հետազոտության առջև դրված **խնդիրներն** են՝

1. Պարզել Jolly Phonics մեթոդի արդյունավետությունը առաջին և երկրորդ դասարաններում հնչյունաբանություն դասավանդելիս, որը հիմք կդառնա սահուն ընթերցանության համար:
2. Կազմել հետազոտության տվյալները արտացոլող պատկերներ և գրաֆիկներ:
3. Որոշել ծրագրի օգտակարությունը հնչյունների դասավանդման գործընթացում:

Գրականության Ակնարկ

Այս թեման արդիական է թե՛ լեզվակիրների պարագայում, թե՛ անգլերենը որպես օտար լեզու դասավանդելիս, այդ պատճառով էլ թեմայի շուրջ հետազոտություններ են իրականացրել աշխարհի տարբեր երկրներում:

Հետազոտություններից մեկն իրականացվել է Հորդանանում՝ առաջին դասարանցիների շրջանում, անգլերենի ընթերցանության դասավանդման վերաբերյալ: Այն իրականացվել է Երկու թիրախային խմբերում. որպես հետազոտության թիրախ ընտրվել են երկու առաջին դասարաններ: Առաջինում կիրառվել է Jolly Phonics-ը, իսկ մյուսում տառերի այբբենական դասավորությամբ դասավանդման մեթոդը:

Արդյունքները ցույց են տվել, որ այն խմբում, որտեղ ընտրվել է Jolly Phonics մեթոդը, որը կենտրոնանում է հնչյունաբանության վրա, աշակերտներին հնարավորություն է տվել արագ և հեշտ սովորել կարդալ, և այդ թիրախային խմբում սովորողները գրանցել են լավ արդյունքներ (Nasrawi 2017):

Հետազոտությունը նշում է, որ դասավանդման հիմքում առկա հնչույթաբանական իրազեկության (phonemic awareness) պարագայում աշակերտները ընթերցանության մեջ գրանցում են ավելի բարձր ցուցանիշներ:

Հետազոտողները կարծում են, որ Jolly Phonics ծրագիր/մեթոդը պետք է ներառվի պետական ծրագրի մեջ, քանի որ այն, ի տարբերություն ավանդական մեթոդների, առաջին դասարանցիներին ապահովում է ավելի պարզ և հստակ ռազմավարությամբ, որը նրանց հնարավորություն է տալիս ավելի սահուն ընթերցել (Nasrawi 2017): Հաջողության գրավականներից մեկն այն է, որ այն ապահովում է բազմապիսի առաջադրանքներով ուսումնառության տարբեր ոճեր ունեցող աշակերտներին:

Մյուս հետազոտությունը, որն ուսումնասիրել է այս մեթոդի արդյունավետությունը, իրականացվել է Պարսկաստանում: Հետազոտության հիմնական նպատակն է եղել տեղեկանալ հնչյունաբանության բազմազգայական (multisensory-based phonics approach) մոտեցման առանձնահատկություններին: Այն նաև միտված էր ուսումնասիրելու, թե արդյոք տվյալ մեթոդը ուներ ազդեցության տարբերություն աղջիկների և տղաների վրա: Հետազոտությանը մասնակցել են 50 տղա և 50 աղջիկ, որոնք բացարձակապես չեն տիրապետել լեզվին: Նրանք ևս բաժանվել են առանձին խմբերի, որտեղ 25-ը դասավանդվել են ավանդական մեթոդով, իսկ մյուս 25 մասնակիցների ուսուցման մեջ կիրառվել է Jolly Phonics մեթոդը: Արդյունքները փաստել են, որ այս մոտեցման կիրառումը խորապես նպաստել է վաղ տարիքում երեխաների ընթերցանության մոտիվացիայի բարելավմանը: Հետաքրքրականն այն է, որ այն ավելի շատ բարձրացրել է տղաների մոտիվացիան: Սակայն

այստեղ հետազոտողը նաև իր արդյունքները համեմատում և հակադրում է այլ հետազոտությունների արդյունքների հետ, օրինակ Baker և Wigfield-ի Կանադայում իրականացրած հետազոտության հետ, ովքեր նշում են, որ 5-րդ և 6-րդ դասարանցիների շրջանում կատարված հետազոտության համաձայն, ծրագրի արդյունավետությունը ավելի նկատելի է եղել աղջիկների պարագայում (Farokhbakht 2015): Սակայն այն նաև համընկնում էր Monteiro և Mata (2001)-ի տվյալների հետ, ովքեր նշել էին, որ տղաներն ավելի լավ արդյունքներ են գրանցել ընթերցանության և մոտիվացիայի մեջ: Արդյունքների պատճառն այն է, որ պատմվածքները, երգերը, գործողությունները այս մեթոդում շատ աշակերտակենտրոն/երեխայակենտրոն են: Եվ արդյունքների տարակարծության պատճառներից մեկն այն է, որ այս ծրագիրը ի սկզբանե նախատեսված է եղել 3-6 տարեկան լեզվակիր երեխաների համար, իսկ առաջին հետազոտության պարագայում այն իրականացվել է 6 տարեկանների շրջանում, մինչդեռ մյուսը 10-12 տարեկանների շրջանում: Հետևաբար սեռային և տարիքային առանձնահատկությունները ևս կարևոր են (Farokhbakht 2015):

Հարկ է նշել, որ մեկ այլ հետազոտության համաձայն այն նաև նպաստում է ուղղագրության բարելավմանը: 2021 թվականին Ինդոնեզիայում իրականացրած հետազոտության համաձայն, որտեղ գրանցել են և՛ քանակական և՛ որակական տվյալներ, ցույց են տվել, որ այն զգալիորեն բարելավել է աշակերտների՝ տառը և իր համապատասխան հնչյունը համադրելու կարողությունը, բառերը ճիշտ հեգելու ունակությունը, ուղղագրությունը և տառը ճիշտ գրելու հմտությունը:

Jolly Phonics ծրագիրը՝ որպես հնչյունաբանության յ սահուն ընթերցանության դասավանդման հիմնական գործիք:

Ուսուցիչների երազանքներից մեկն է ունենալ աշակերտներ, ովքեր արագ սովորում են վարժ կարդալ, սակայն երեխաներին տառերը սովորեցնելուց հետո պարզ է դառնում, որ նրանք դժվարությամբ են իրար միացնում հնչյունները, կազմում բառեր և կարդում: Հնչյունաբանության ճիշտ մոտեցումն ու դասավանդումը զգալիորեն օգնում է այդ հարցում:

Հնչյունների և տառերի դասավանդումն ավելի է բարդացնում այն խնդիրը, որ երեխաները լեզվակիրներ չեն, այլ նոր են ծանոթանում թե՛ լեզվի, թե՛ այբուբենի հետ:

Հնչյունաբանությունը, ուսուցման կանոնավոր և համակարգային մոտեցում է, քանի որ այն կապում է տառերը հնչյունների հետ: Հնչյունաբանությունը սովորողներին օգնում է ավելի արագ ու հեշտ կարդալ և գրել:

Jolly Phonics-ը անգլերենի այբուբենի 26 տառերի դասավանդումը փոխել է և այս պարագայում այն բաղկացած է 42 տառ-հնչյուններից, երկհնչյուններից կամ տառային կապակցություններից, որոնց շնորհիվ երեխաները սովորում են տառերն ու հնչյունները և սկսում են վարժ կարդալ: Հնչյունները բաժանված են 7 խմբերի, յուրաքանչյուրում վեցական հնչյուն: Սկզբում սովորում են ամենաշատ կիրառվող հնչյունները, որպեսզի հնարավորինս արագ կազմեն բառեր, գրեն և կարդան (տե՛ս հավելված 6):

Այս մեթոդը ամբողջապես տարբերվում է մնացածներից, քանի որ այն իր դասավանդման մեջ ներառում է ուսումնառության գրեթե բոլոր ոճերը՝ վիզուալ, աուդիալ, կինեսթետիկ: Կա անգամ ծրագիր, որը կարելի է ներբեռնել հեռախոսների մեջ, և երեխաները ինքնուրույն կկարողանան օգտվել դրանից: Այստեղ վիզուալ պատկերների միջոցով ցույց է տրվում, թե ինչպես է գրվում այդ տառը, ինչպես կարելի օդում ձեռքով գրել այն, և թե ինչպես է արտասանվում այն: Ծրագիրն իր մեջ ներառում է նաև կարճ երգ յուրաքանչյուր հնչյունի համար, որտեղ բառերի մեծամասնությունը սկսում են այդ հնչյունով, և որտեղ աշակերտները երգելուց բացի նաև հատուկ շարժումներ են անում, որոնք բնորոշ են տրված հնչյունով սկսվող բառին: Օրինակ՝ <<**S>>** հնչյունի երգը երգելիս ձեռքով տառի գրելաձևի նման շարժում են անում, որը նաև երգի հիմնական բառին է նման՝ օձին, (snake) և այս պարագայում այն նաև համընկնում է հնչյունի հետ: Այս ամենից բացի կա փոքրիկ պատմություն, որտեղ բառերը հիմնականում սկսում են հենց այդ հնչյունով:

Հնչյունների դասավանդման հստակ հերթականություն կա, որի շնորհիվ հենց առաջին երեք հնչյունները սովորելուց հետո աշակերտները կկարողանան կարդալ երկու բառ:

Հնչյունները կարող են նաև կազմվել տառակապակցությամբ, օրինակ՝ choose բառը բաղկացած է 6 տառից, բայց 3 հնչույթից , /ch/, /oo/, և /z/:

Պատմվածքի ընթերցումը կարող է կատարվել երկու կերպ՝ թե՛ որպես դասի սկիզբ կամ նախաբան, թե՛ որպես հնչյունը սովորեցնելու հիմնական առաջադրանք: Կան երկու տիպի ընթերցանության նյութեր. մեկը հենց յուրաքանչյուր հնչյունի կից նյութն է, սակայն կան նաև հավելյալ ընթերցանության նյութեր, որտեղ կարելի է գտնել թիրախավորված բառապաշար, որտեղ բառերում կան տվյալ օրվա սովորած հնչյունը կան հնչյունակապակցությունը: Ընթերցանության ընթացքում աշակերտները ոչ միայն լսում են ուսուցչի կողմից կարդացած

նյութը և տեքստը, այլ նաև կոնտեքստում լսում և տեսնում են իրենց սովորած բառը և հնչյունը՝ դրան զուգահեռ զարգացնելով տեքսի հետ աշխատելու հմտությունները:

Ծրագիրը ավելի արդյունավետ դասավանդելու համար ստեղծվել են հավելյալ սահիկաշարեր բոլոր հնչյունների համար և կարճ տեքստեր, որոնք երեխաները սիրով ընթերցում են:

Մյուս բաղադրիչը երգն ու պատկերավոր շարժումներով ցուցադրվող գործողություններն են. այստեղ արդեն երեխաները երգում են Jolly Phonics ծրագրի երգերը, որի ընթացքում շարժվում են: Օրինակ՝ **<<a>>** հնչյունն անցնելիս մրջյունի (ant) նման մատներով շարժվում են ձեռքի վրա և երգում երգը:

Blending

Հնչյուններն իրար կապելն ու բառ ստանալը սկսում է, երբ սովորում են առաջին խումբը s,a,t,p,i,n, ճիշտ է, առաջին երեք հնչյունով ևս կարող են երկու բառ ստանալ, սակայն առաջին խումբն ավարտելուց հետո երեխաները կարողանում են անվանել հնչյունները, դրանք միացնել միմյանց և ստանալ բառեր: Բառերն ընտրվում են այնպես, որ աշակերտները կարողանան ընթերցել դրանք, քանի որ տառերը կարող են ունենալ մի քանի հնչյուններ կամ, մեկ այլ հնչյունի հետ միանալով, արտասանվել այլ կերպ: Այս փուլում երեխաների համար անհրաժեշտ է ընտրել բառեր, որոնք կարդացվում են իրենց սովորած կանոնների համաձայն:

Հնչյուններն իրար միացնելու և բառը կարդալու համար կարելի է տարբեր խաղեր կիրառել: Օրինակ՝ աշակերտներից յուրաքանչյուրին տալ մեկական հնչյուն և, միասին կանգնելով իրար կողքի, իրենք ստեղծեն բառեր և կարդան:

Jolly Phonics-ի դասավանդումը հանգեցնում է 5 հմտությունների զարգացմանը. ճիշտ արտասանել տառերը, դրանք միմյանց հետ կապակցել և բառեր կազմել, ճանաչել հնչյունները բառերի մեջ և կարդալ խրթին կամ ուղղագրական դժվարություն ունեցող բառերը (tricky words):

Այս թեմայի շուրջ մեր հետազոտությունը իրականացվել է երկրորդ դասարանում, որտեղ այս մեթոդով սկսել ենք աշխատել առաջին դասարանի երկրորդ կիսամյակից և դեռ շարունակում ենք: Առաջին դասարանում երեխաները անցել էին ծրագրով նախատեսված 7 խմբից 5-ը, այս տարի շարունակում ենք մնացած երկուսը:

Սեպտեմբեր ամսվա սկզում աշակերտներին բաժանվեցին տեքստեր, որտեղ կային բառեր, որոնց հնչյունաբանական կանոնները նրանք ուսումնասիրել էին անցած տարի, սակայն նաև կային այնպիսի հնչյուններ, որոնք աշակերտները առանձին չէին ուսումնասիրել, օրինակ *th/th/ch/sh* և այլն: Թվով 14 աշակերտներից երեքը կարողացան գրեթե ճիշտ կարդալ բոլոր բառերը, յոթը դժվարություններով, տառակապակցություններից

որոշները ճիշտ կարդացին, իսկ մնացած չորսը կոնկրետ այդ հնչունները չկարողացան ճիշտ ընթերցել: Կից կարող եք տեսնել գծապատկերը:

Գծապատկեր 1



Երկրորդ գծապատկերում նույնն տվյալներն են, սակայն ներկայացված են տոկոսներով:

Գծապատկեր 2



Սրանից հետո շարունակվեց հետազոտությունը:

Դասերից մեկի ընթացքում **th** հնչյունի դասավանդումն էր, երեխաները ծանոթ էին այդ երկու տառին էլ, իսկ հետո ծանոթացան նոր հնչյունի հետ: Դասի սկզբում աշակերտների համար ընթերցվեց փոքրիկ պատմություն, որտեղ բառերի մեծամասնությունը սկսվում էր այդ հնչյունով, և աշակերտները, երբ լսում էին այդպիսի բառ, բութ մատը վերև նշանով ցույց էին տալիս:

Այնուհետև աշակերտները սահիկաշարի և քարտերի միջոցով սովորեցին նոր բառերը, որից հետո խաղացին նկարներից <<Ո՞րն է բացակայում>> խաղը, այնուհետև դասի հիմնական առաջադրանքը և վերջում՝ երգը (տես հավելված 1 դասապլան 1):

Առաջադրանք

Station Rotation

Խմբային աշխատանք

Դասարանում նախօրոք ստեղծվել էր 4 կայան, և յուրաքանչյուր կանգառ ուներ տարբեր աշխատանքներ, աշակերտները առաջադրանքի սկզբում բաժանվեցին 4 խմբերի: Խմբերը կազմվել էին անհամասեռ: Թիմում ներգրավված էին հմուտ, ուժեղ և դժվարություններ ունեցող աշակերտներ: Առաջին կայանում աշակերտերը պետք է գրեին 7-ական բառեր, որոնք ունեն այդ հնչյունը: Հաջորդ կանգառում դրված էր աշխատանքային թերթիկ, որտեղ աշակերտները պետք է գունավորեին միայն այն բառերը, որոնք սկսվում են այդ հնչյունով: Երրորդ կանգառում, պետք է պաստառ պատրաստեին, սակայն թողնեին անավարտ. պաստառը պետք է ավարտեր չորրորդ թիմը, իսկ մնացած խմբերը պիտի լրացնեին դրա մեկ հատվածը: Չորրորդ կանգառում աշակերտները պետք է նկարագրեին նկարը՝ օգտագործելով թիրախային բառապաշարը:

Մեկ այլ առաջադրանք՝ <<sh>> և <<ch>> հնչյունները դասավանդելիս: Learningapps կայքի միջոցով խաղալ խաղ, որտեղ աշակերտներից յուրաքանչյուրը մոտենում էր գրատախտակին և, տեսնելով պատկերը, այն տեղադրում էր համապատասխան սյունակում: Բառերի կեսը սկսվում էր <<ch>> հնչյունով, իսկ մյուս կեսը՝ <<sh>> (տե՛ս հավելված 4):

Աշակերտներին բաժանվեցին երկուական քարտեր, որոնցից մեկի վրա գրված էր <<ch>>, իսկ մյուսի՝ <<sh>>: Էկրանին ցույց տալով պատկերները՝ աշակերտները բարձրացնում էին համապատասխան քարտը:

Այն օգնեց իրականացնել ձևավորող գնահատում, քանի որ երևում էր, թե աշակերտներից քանիսն են ցույց տալիս ճիշտ տարբերակը (տե՛ս հավելված 3 դասապլան 3): Մեկ այլ նմանատիպ առաջադրանք ևս կիրառվեց. սովորողները ստացան քարտեր, որտեղ այդ օրվա սովորած բառերի նկարներն էին պատկերված: Գրատախտակին տեսնելով գրված բառը՝ նրանք ցույց էին տալիս համապատասխան պատկերը: Եվ, իհարկե, յուրաքանչյուր հնչյուն սովորելիս աշակերտները երգում են դրան համապատասխան երգը (տե՛ս հավելված 5):

Հինգ շաբաթ անց աշակերտներին կրկին բաժանվեցին տեքստերը (տե՛ս հավելված 7), որի արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը: Աշակերտների զգալի մեծամասնությունը՝ 10 աշակերտ, կարողացավ կարդալ ամբողջ տեքստը՝ գրեթե առանց սխալների, երեք աշակերտներ ունեցան որոշ դժվարություններ, և միայն մեկ աշակերտ էր, որ բավականին

դանդաղ էր ընթերցում և թույլ տալով սխալներ: Գծապատկեր 3-ում երևում են արդյունքները, իսկ գծապատկեր 4-ում ներկայացված են նույն տվյալները տոկոսներով:

Գծապատկեր 3



Գծապատկեր 4



Եզրակացություն

Ուսումնասիրելով առաջին և երկրորդ դասարանի աշակերտների սահուն ընթերցանության դասավանդման ամենահաջողված ծրագիր/մեթոդներից մեկը՝ Jolly Phonics-ը, ինչպես նաև կիրառելով ծրագրի բոլոր հնարավորությունները և հարստացնելով այն մի շարք առաջադրանքներով և նյութերով՝ կարելի է ամփոփել ստացած արդյունքները և եզրակացնել, որ այս մեթոդը շատ արդյունավետ է աշակերտներին հնչյունաբանություն սովորեցնելու և ընթերցանությունը զարգացնելու համար:

Հարկ է նշել, որ այդ մեթոդի պարագայում աշակերտները շատ ավելի շուտ են սկսում գրել և կարդալ, կազմել բառեր և, ի տարբերություն ավանդական մեթոդի, ստիպված չեն լինում տառերի առնվազն կեսն անցնել, որպեսզի կարողանան կազմել բառեր, և հետևաբար այս դեպքում, քանի որ իրենք ավելի արագ են սկսում տիրապետել նյութին, ավելի մոտիվացված են աշխատում:

Բացի այդ, այս ծրագրի շնորհիվ մենք օգտագործում ենք բոլոր հնարավոր տարբերակները և ուսումնառության գրեթե բոլոր ոճերը, ինչն էլ օգնում է աշակերտներին ավելի լավ ըմբռնել նյութը և մտապահել այն:

Հետաքրքրական էր պարզել, որ թե՛ մեր, թե՛ աշխարհի տարբեր կողմերում իրականացված հետազոտությունների պարագայում, որոնք կատարվել են ինչպես լեզվակիրների, այնպես էլ անգլերենը՝ որպես օտար լեզու սովորողների հետ, ստանում ենք այն պատկերը, որ աշակերտները, ովքեր սկսել են սովորել այս ծրագրով, գրանցում են շատ ավելի լավ արդյունքներ թե՛ կարդալու, թե՛ բառեր կազմելու և գրելու, թե՛ ուղղագրության մեջ:

Ծրագրի արդյունավետության մասին կարող ենք փաստել ոչ միայն հետազոտության տվյալներով, այլ նաև սեփական փորձով, քանի որ, ունենալով դասավանդման մի քանի տարվա փորձ, մինչ այս ծրագրի հետ ծանթանալը տառերի դասավանդումը կատարել եմ այլ մեթոդներով ևս, սակայն վստահաբար կարող եմ նշել, որ ամենաարդյունավետը սա էր:
Ստացված տվյալներն ամփոփելով՝ ստանում ենք այն պատկերը, որ դասարանում սովորող 14 աշակերտներից տասը անսխալ կարդում էին տեքստը և ճանաչում բոլոր հնչյունները, որն էլ կազմում էր դասարանի 72%-ը: Մյուս երեքը ունեցան որոշ դժվարություններ (դասարանի 21%), և միայն մեկ աշակերտ էր (7%), ով դանդաղ և սխալներով էր ընթերցում տեքստը:

Ծրագիրը սովորեցնում է աշակերտներին նաև մի շարք հմտություններ: Նրանք սովորում են 42 հիմնական տառ-հնչյունները: Երեխաները կարողանում են համապատասխանեցնել տառը հնչյունի հետ: Հեշտ և արագ ըմբռնում են տառի

կազմությունը: Օգտագործելով մի շարք բազմազգայական մեթոդներ՝ աշակերտները սովորում են՝ ինչպես ճիշտ գրել տառը: Սովորում են, տառերը միմյանց կապակցելով, կազմել բառեր: Կարողանում են տարբերակել հնչյունը բառերի մեջ: Եվ ամենավերջում սովորում են խրթին բառեր (tricky words), որոնք ուսուցանելիս շեշտը դրվում է այն փաստի վրա, որ այս բառերն ունեն անկանոն ուղղագրություն և ընդհանուր կանոններից շեղված են:

Այսպիսով, Jolly Phonics ծրագրի և մեթոդի ընտրությունը արդյունավետ միջոց է երեխաներին հնչյունաբանություն դասավանդելու, ճիշտ ուղղագրություն և սահուն ընթերցանություն սովորեցնելուն: Երեխաները մեծ ոգևորությամբ կատարում են առաջադրանքները, որոնք, բազմաժանր և տարաբնույթ լինելով, գրավում են իրենց, որի շնորհիվ հնարավորինս արագ սովորում են գրել և կարդալ, ինչն էլ լեզվի դասավանդման առանցքային խնդիրներից է:

Գրականության Ցանկ

1. Ariati, N. P., Padmadewi, N. N. and Suarnajaya, W. (2018). Jolly phonics: effective strategy for enhancing children english literacy. Bali Indonesia, 1-7
2. Baker, L., & Wigfield, A. (1999). Dimensions of children's motivation for reading and their relations to reading activity and reading achievement. Reading Research Quarterly, 34, 452–477
3. Farokhbakht, L. (2015). The Effect of Using Multisensory-based Phonics in Teaching Literacy on EFL Young Female/Male Learners' Early Reading Motivation. International Journal of Research Studies in Education
4. Nasrawi, A. (2017). THE EFFECT OF USING JOLLY PHONICS ON JORDANIAN FIRST GRADE PUPILS' READING. International Online Journal of Education and Teaching (IOJET), Jordan
5. Srikandewie, Y. N. (2021) IMPROVING STUDENTS SPELLING SKILLS THROUGH USING JOLLY PHONICS METHOD (AGE 5 YEARS), Dialectical Literature and Education Journal(DLEJ), 44-47

<u>Հավելված</u> 1

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Julieta Adamyan

Առարկա՝ Անգլերեն		**Ամսաթիվ՝**		**Կիսամյակ՝**	**1**	**Դասարան՝**	2nd	**Դասաժամ՝**	
Խմբի կազմը՝	**Աղջիկ՝ 5**		**Տղա՝ 9**			**ՈՒՀԿ՝**			
Թեմա՝	Digraph **th**								
Օգտագործվող նյութեր՝	PPT, flashcards, worksheets, internet resources								
Ամբողջական պատկեր՝	The students have already learnt the single sounds and they know words that begin with that sounds. They will consolidate the vocabulary by playing games. They will learn sound th and some words that start with that sound. The students will be able to recognize the sound and say words that begin with /th/. The students will be able to identify whether the /th/ sound is in a word.								
Դասի նպատակը՝	To present and practise sound **th**.								
Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ	R1. To read aloud short sentences that are statements, questions, and exclamations, made up of sight words, and grade-appropriate vocabulary words. W1. To copy letters and familiar high-frequency words and phrases correctly. W2. To write words and short sentences. OL2 –Հ-ՈՒ.1 OL2-Հ-Գ.1								
Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ	S8, S9, S14, S24, S25, S28, S30, S32								

	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները՝	To remember and name some words that start with /th/. To apply the target vocabulary for describing a picture.
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություններ Համակարգեր և մոդելներ
Բնագիտական ճարտարագիտական պրակտիկաներ	
Միջառարկայական կապեր	Art

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Ի՞նչ թիրախ եք ընտրել Ձեր՝ որպես ուսուցչի առաջընթացը փաստելու համար: To strengthen my skills in teaching phonics and new vocabulary.	***Սեղմ ներկայացնել, թե ինչ եք անելու այս դասին՝ այդ նպատակներին հասնելու համար:*** Practising the words with various activities. Asking questions and playing games.

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Պլանավորած տարբերակում ֆ ՈՒՆԳ ռազմավարություններ *Ուսուցիչ*	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) Կապը չափորոշիչային վերջնարդյունքների հետ
5 minutes **7 minutes** **3 minutes** **16 minutes**	• Review vocabulary: show the pictures to the students and ask them to say the words. • Learn the new words that start with the sound th. • Participate in the game using the flashcards: What's missing? • **Station Rotation** In the first station students should write 7 words that contain that sound. In the second station they should colour the words that start with the sound th. In the	• Play a game with a ball. • Ask questions to the students. • Walk in the classroom and make sure that everyone is involved in the process.	What is it? What's missing?

3 minutes **3 minutes** **3 minutes**	third station they need to make a poster (but each group should do only one part, not the whole poster). In the fourth station they should describe a picture using the target vocabulary. • Say the new words and ask the students to show the corresponding flashcard. • Sing jolly phonics songs. • Summarize the lesson.	Show them a picture and help them talk about it using the target vocabulary.	Can you say 5 words that start with the sound th Can you describe a picture? What do you see? What else can you see? What have you learnt?
Աջակցություն			
Գնահատում	Formative assessment		
Տնային աշխատանք			
Անդրադարձ դասին	The goal of the lesson was to learn sound th and to consolidate the vocabulary. Different activities helped the students cover the material completely. I think they were all engaged and seemed to enjoy the class. The kids were particularly enthusiastic about working in teams and having various activities. I was able to manage my time wisely and complete all the activities that I had planned for the lesson. The students were mainly focused on the lesson and managed to answer the questions.		

Հավելված 2

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Julieta Adamyan

Առարկա՝ Անգլերեն		**Ամսաթիվ՝**		**Կիսամյակ՝**	**1**	**Դասարան՝**	2nd	**Դասաժամ՝**	
Խմբի կազմը՝	**Աղջիկ՝ 5**		**Տղա՝ 9**			**ՈՒՀԿ՝**			
Թեմա՝	Digraph **ch**								
Օգտագործվող նյութեր՝	PPT, flashcards, worksheets, internet resources								
Ամբողջական պատկեր՝	The students have already learnt the single sounds and they know words that begin with that sounds. They will consolidate the vocabulary by playing games. They will learn sound ch and some words that start with that sound. The students will be able to recognize the sound and say words that begin with /th/.								
Դասի նպատակը՝	To present and practise digraph **ch**. To pre-teach new words that start with the sound **ch**.								
Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ	R1. To read aloud short sentences that are statements, questions, and exclamations, made up of sight words, and grade-appropriate vocabulary words. W1. To copy letters and familiar high-frequency words and phrases correctly. W2. To write words and short sentences. OL2 –Հ-ՈՒ.1 OL2-Հ-Գ.1								
Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ	S8, S9, S14, S24, S25, S28, S30, S32								

	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները՝	To remember and name some words that start with /ch/. To apply the target vocabulary and make sentences. To read short texts.
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություններ Համակարգեր և մոդելներ
Բնագիտական ճարտարագիտական պրակտիկաներ	
Միջառարկայական կապեր	Art

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Ի՞նչ թիրախ եք ընտրել Ձեր՝ որպես ուսուցչի առաջընթացը փաստելու համար: To strengthen my skills in teaching phonics, new vocabulary and reading.	***Սեղմ ներկայացնել, թե ինչ եք անելու այս դասին՝ այդ նպատակներին հասնելու համար:*** Practising the sound and the new words with various activities. Playing games.

Գործողություններ (ժամ/տյողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Պլանավորած տարբերակում յ ՈՒՆԳ ռազմավարություններ *Ուսուցիչ*	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) Կապը չափորոշիչային վերջնարդյունքների հետ
5 minutes **7 minutes** **3 minutes** **5 minutes** **7 minutes**	• Review vocabulary: show the pictures to the students and ask them to say the words. • Learn the new words that start with the sound ch. • Participate in the game using the flashcards: What's missing? • The students read the word and show the corresponding flashcard. • The students get a worksheet where they have three assignments. In the first exercise they should circle sound ch, in the second exercise they have to circle the words that start with that sound, in the third exercise the first letters are missing and the students should fill in the gaps and write the letters.	• Play a game with a ball. • Ask questions to the students. • Present the written words and ask them to show the corresponding flashcard. • Walk in the classroom and make sure that everyone is engaged in the	What is it? What's missing? Can you say 5 words that start with the sound th

10 minutes **2 minutes** **1 minute**	• Students read a short text, where most of the words start with the sound ch. • Sing jolly phonics songs. • Summarize the lesson.	process and focused on the task.	What have you learnt?
Աջակցություն			
Գնահատում	Formative assessment (Worksheet, Flashcards)		
Տնային աշխատանք			
Անդրադարձ դասին	The main goal of the class was for everyone to consolidate the vocabulary and the phonics rules and I think the activities that I used, were enough for them to learn the sound and target vocabulary. The students were mainly focused on the lesson and managed to answer the questions. The worksheet and the flashcards were interesting, productive, and also a good formative assessment tool for me.		

Հավելված 3

Դասապլան 3

Ուսուցիչ՝ Julieta Adamyan

Առարկա՝ Անգլերեն		**Ամսաթիվ՝**		**Կիսամյակ՝**	**1**	**Դասարան՝**	2nd	**Դասաժամ՝**	
Խմբի կազմը՝	**Աղջիկ՝ 5**		**Տղա՝ 9**			**ՈՒՀԿ՝**			
Թեմա՝	**sh հնչյուն**								
Օգտագործվող նյութեր՝	սահիկաշար, քարտեր (flashcards), համացանցային աղբյուրներ https://learningapps.org/display?v=pows23q6522								
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները սովորել են ch հնչյունը և մի շարք բառեր այդ հնչյունով: Նրանք կամրապնդեն բառաշարը խաղերի և զանազան առաջադրանքների միջոցով: Կսովորեն sh հնչյունը և նոր բառեր, որոնք սկսվում են այդ հնչյունով: Աշակերտները կճանաչեն այդ հնչյունը, կասեն բառեր, որոնք սկսվում են կամ որտեղ կա տվյալ հնչյունը:								
Դասի նպատակը՝	Ծանոթացնել sh հնչյունի հետ և սովորեցնել մի քանի բառեր այդ հնչյունով: Ամրապնդել ch և sh հնչյուններն ու բառապաշարը:								
Կապը առարկայի չափորոշչային վերջնարդյունքների հետ	R1. To read aloud short sentences that are statements, questions, and exclamations, made up of sight words, and grade-appropriate vocabulary words. W1. To copy letters and familiar high-frequency words and phrases correctly. W2. To write words and short sentences. OL2 –Հ-ՈՒ.1 OL2-Հ-Գ.1								
Կապը հանրակրթության պետական չափորոշիչի հետ	S8, S9, S14, S24, S25, S28, S30, S32								
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ								

Վերջնարդյունքները՝	Հիշել և կիրառել որոշ բառեր, որոնք սկսում են այդ հնչյուններով: Կիրառել թիրախային բառապաշարը նկարը նկարագրելու համար:
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություններ Համակարգեր և մոդելներ
Բնագիտական ճարտարագիտական պրակտիկաներ	
Միջառարկայական կապեր	

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	**Նպատակներին հասնելու ռազմավարությունը**
Ի՞նչ թիրախ եք ընտրել Ձեր՝ որպես ուսուցչի առաջընթացը փաստելու համար: Բարելավել իմ հմտությունները հնչյունաբանություն և ընթերցանություն դասավանդելիս:	***Սեղմ ներկայացնել, թե ինչ եք անելու այս դասին՝ այդ նպատակներին հասնելու համար:*** Կազմակերպել զանազան առաջադրանքներ ուսումնական տարբեր ոճեր և նախասիրություններ ունեցող աշակերտների համար: Ներառել ՏՀՏ գործիքներ: Ունենալ ձևավորող գնահատում իրականացնող առաջադրանքներ:

Գործողություններ **(ժամ/տյողություն)**	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Պլանավորած տարբերակում յ ՈՒՆԳ ռազմավարություններ** ***Ուսուցիչ***	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)** **Կապը չափորոշիչային վերջնարդյունքների հետ**
3 minutes **3 minutes** **7 minutes** **5 minutes**	• Կրկնել նախորդ դասին սովորած բառապաշարը: • Ծանոթանալ sh տառի պատմությանը: • Սովորել նոր բառեր, որոնք սկսվում են sh հնչյունով: • Learningapps կայքի միջոցով խաղալ խաղ, որտեղ աշակերտներից յուրաքանչյուրը կմոտենա գրատախտակին և տեսնելով պատկերը այն կտեղադրի համապատասխան սյունակում: Բառերից կեսը սկսվում է ch	Սահիկաշար Կարդալ sh տառի պատմությունը: Սահիկաշար Քարտեր Օգնել աշակերտներին խաղալ խաղը և հետևել կանոններին:	Ի՞նչ է սա: Կարո՞ղ ես նախադասություն կազմել այս բառով: Ո՞ր բառերն են սկսվում ch հնչյունով և որոնք sh:

	հնչյունով, իսկ մյուս կեսը՝ sh: https://learningapps.org/display?v=pows23q6522		
5 minutes	• Աշակերտներին կբաժանվի երկուական քարտեր, որոնցից մեկի վրա գրված է ch, իսկ մյուսի՝ sh: Էկրանին ցույց տալով պատկերները աշակերտները ցույց կտան համապատասխան քարտը՝ կախված այն բանից թե որ տառով է սկսվում բառը:	Smart Board-ի վրա ցույց տալ բառերը և խնդրել աշակերտներին բարձրացնել համապատասխան քարտը: Այն ինձ կօգնի իրականացնել ձևավորող գնահատում, քանի որ կտեսնեմ, թե աշակերտներից քանիսն են ցույց տալիս ճիշտ տարբերակը:	
5 minutes	• Սովորողները կստանան քարտեր, որտեղ կլինեն այդ օրվա սովորած բառերի նկարները: Գրատախտակին տեսնելով գրված բառը նրանք ցույց կտան համապատասխան պատկերը:	Սա ևս ձևավորող գնահատում իրականացնելու շատ լավ տարբերակ է տարրական դպրոցում, որը կօգնի ստանալ ավելի ամբողջական պատկեր:	
7 minutes	• Աշակերտները ունեն անձնական փոքրիկ գրատախտակներ, դասի ընթացքում նորից կնայեն թիրախային բառաշարի նկարներին և կգրեն բառերը իրենց գրատախտակների վրա:	Այս պարագայում, նաև կհամոզվեմ, որ երեխաները կարողանում են ճիշտ գրել այդ հնչյունն ու բառերը:	

3 minutes **2 minutes**	• Սովորել այդ հնչյունի երգը: • Ամփոփել դասը:		Ի՞նչ բառեր հիշեցիք:
Աջակցություն			
Գնահատում	Ձևավորող գնահատում (գործիքներն ու նկարագրությունները նշված են առաջադրանքների բաժնում) :		
Տնային աշխատանք			
Անդրադարձ դասին	Դասի նպատակը աշակերտներին նոր հնչյուն սովորեցնելն էր և նախորդը ամրապնդելը: Բազմաժանր առաջադրանքների շնորհիվ աշակերտները կարողացան սովորել նոր հնչյունը և նոր բառեր, որոնք սկսում են այդ հնչյունով: Նրանք բոլորը ներգրավված էին դասապրոցեսում և մեծ ոգևորությամբ կատարում էին հանձնարարված առաջադրանքները:		

Հավելված 4

https://learningapps.org/display?v=pows23q6522

Հավելված 5

https://www.youtube.com/watch?v=zwupro4AVsY

Հավելված 6

https://www.jollylearning.co.uk/jolly-phonics/

1. s, a, t, i, p, n
2. c k, e, h, r, m, d
3. g, o, u, l, f, b
4. ai, j, oa, ie, ee, or
5. z, w, ng, v, oo, oo
6. y, x, ch, sh, th, th
7. qu, ou, oi, ue, er, ar

Հավելված 7

This is Mar**th**a. **Sh**e is **sh**ort and **th**in. **She** likes wearing red **sh**oes and white **sh**orts. She likes playing tennis with her bro**th**er.

Martha lives in a small house wi**th** her family. Now, her dad is in **the** room. He is wat**ch**ing a film. Mum is in the garden. She is playing **ch**ess.
The **ch**ildren are in the kit**ch**en. They are eating **ch**ips and **ch**eese.
Granny is in the bedroom. She is sleeping on the **ch**air.